

ներով հանգուցեալ կայսրի մասին Ամենաման-
րաման կերպով նկարագրված է այն տպաւո-
րութիւնը, որ թողել է կայսրի մասը, նրա գոր-
ծունէութիւնը, սովորութիւնները Որպէս մարդու,
հանգուցեալ կայսրին «Новое Время» լրագիրը
այսպէս է նկարագրում.

«Որպէս մարդ, կայսր Ալեքսանդր III աչքի էր
ընկնում իր հանդարտ խելքով, ուղղամտութեամբ
և ամենից աւելի սիրում էր արդարութիւնը: Եթէ
որ և է մէկը կամենում էր ծածկել նրանից կամ
ծաղկեցնել ճշմարտութիւնը, նա ընդմիջող զբո-
ւնում էր նրա վստահութիւնից, թէպէտ առհասա-
րակ նա ընտելանում էր մարդկանց և չէր սի-
րում փոխել իր աշխատակիցներին, նոյնպէս իր
կարծիքը մարդկանց մասին: Նրա ուղղամտու-
թիւնը երևում է նրանից, որ նա չէր քաջվում
համաձայնել փոքրամասնութեան կարծիքի հետ,
եթէ այդ ճշմարիտ էր համարում:

«Հանգուցեալի հաստատակամութիւնը ապա-
ցուցում է շատ փաստերով: Ամենից շատ յայտ-
նի է կրօն վարչական, իշխան լիւրճին և գննե-
րայ աղիւտանաւ կրթականական ծառայութիւնից
արձակելը, զանազան դեղձումները համար: Նա
մինչև անգամ ուսաց ծառայութիւնից արձակեց
բազմաթիւ Ալեքսանդր իշխանին, երբ համոզ-
վեց, որ նա դաւաճանում է ուսաց շահերին:
Նա նոյնպիսի խտրութիւն գործ էր դնում մինչև
անգամ կայսերական (նոտանիքի) անդամներին վե-
րաբերմամբ:

«Հանգուցեալ թագաւորի համակրելի կերպա-
րանքը, բարի կապոյտ աչքերը և սիրալիր ժպի-
տը ամենքին յայտնի են: Նա ֆիզիքական մեծ
ոյժ ունէր, չը նայելով որ երիտասարդութեան
ժամանակ տիֆ հիւանդութիւնն է ունեցել, և
նորեւա էլ ինֆլուէնցա ունէր. բայց այնպէս էր
թվում, թէ նա դեռ շատ երկար պէտք է ապ-
րէր: Չարմանալի էր, որ նա կրիմե ամենին չէր
սիրում, և հանգամանքներ ճակատագրական բեր-
մամբ, Նա կորցրեց այնտեղ իրան սիրելի մի
քանի անձանց:

«Նա սիրում էր յուր ի հանգիստ կերպով
անձամբ քննել իւրաքանչիւր գործ և խու-
սափում էր միջնորդներից, պատահական գե-
ւուցանողներից: Նա միշտ աշխատում էր ի-
մանալ ճշմարտութիւնը և յաճախ խտրութեամբ
պատկերում էր, որ Նրա անուան ուղղած նա-
մակները և խնդիրները անպատճառ իր ձեռքը
հասցնէին: Նահանգապետների ուղարկած հաշիւ-
ները Նա ուշադրութեամբ կարդում էր, և նկա-
տողութիւններ անում, որոնց մասին մինիստր-

նակոյն են անում ամեն տեսակ արդարութիւն,
սանձ կատարած, ամօթ մոռացած ցեխտում են
ամեն մի համակրելի միտք, ամեն մի ընդհանուր
զաղափար:

Իսկ որ ապականութիւնը այնպէս պաշարել է
նրանց, որ այլ ևս չարվելու հնարաւորութիւն
չունենէ:

Եւ ահա օրհասական աղաղակը—կուսակցու-
թիւնները մեզ վնասում են, բաւական է, բաւա-
կան է այսքան թշնամութիւնը, փոխադարձ ա-
տելութիւնը: Այսինքն—լուծել, մոռանալ, եթէ
կարելի է, և հաշտվել: Բայց հնարաւոր է այդ
բանը: Ինչի հետ կարող է հաշտվել կեղծիքը,
ստույթները, անամօթութիւնը: Ո՛վ ծաղկեցրեց
գրական շահաւոր, ով մտքի պոռնկութիւն ա-
ռաջ քաշեց ամեն բերան լուսնային համար, ով
ապագրական խօսքը գցեց մարդկանց ոտների
տակ, անխիղճ կերպով յեղաշրջելով իրողութիւն-
ները, ահապէս հասարակութիւնների աչքի առաջ
օրը ցերեկով կատարված փաստերը. ով քար
անդմեջ սրտին ու խղճին և անձնական գծով
նպատակների համար վաճառքի հանեց իր գրիչը
և ստեղծեց զղվելի պատկերներ մի գրականու-
թիւն: Նրա, հրեան, ինչի մէջ ցոյց տուիք թէ
դուք գիտէք պաշտպանել արդարութիւնը, որ որ
էլ լինի նա: Գուք ձեր մարդկանց հացին իւր ըը-
սելու համար ինքները անհարկ մարդ դարձաք:
Տեղը եկաւ, դուք գոչեցիք զպրոցական կարգա-
պահութիւն, մատաղ սերունդի բարոյական առա-
ջադիւթութիւն. իսկ երբ փոխվեց հանգամանքը,
լուստեղները թափեցիք այն հեղաբարձներին և
ուսուցիչներին զլսին, որոնք այնքան պարտաճա-
նաչ զանկեցին, որ չուղեցին պաշտօն վարել մի
զպրոցում, ուր պէտք է սովորէին այն աշակերտ-
ները, որոնք փոքրցում անպատում էին թէ հո-
գաբարձներին և թէ ուսուցիչներին:

ների մասնագիտիկ կարծիքն էր պահանջում
Նա յաճախ շատ խիստ ձեռով էր արտայայտում իր
կարծիքը, չը տանելով սուտը և խաբեւորութիւ-
նը:

«Նա սիրով ընդունում էր պաշտօնական քիչ
շատ աչքի ընկնող դրութիւն ունեցողներին,
ընդունում էր գիտնականներին և աչքի ընկնող
գրողներին, որոնց հետ շատ հասարակ էր վար-
վում, իւրաքանչիւրին ձեռք էր մեկնում և իւրաքան-
չիւրին ասում էր «Գուր»: Նա ընտանիքի օրինակե-
լի և իղեպալան հայր էր. խուսափում էր չեւ-
ղութիւնից և արտաքին փայլից: Նա սիրում էր
իր շուրջը տեսնել միայն այնպիսի անձանց, որ-
ոնք Նրա կատարեալ վստահութիւնն էին վայն-
ելում:

«Գահը բարձրանալով Նա չանցաւ Չմերային
պալատը, այլ մնաց Անիչկով պալատում, ուր
շատ համեստ կերպով ապրում էր դեռ թագա-
ւորանք եղած ժամանակ: Նա ընդարձակեց
միայն այդ պալատի այգին, ուր ձմեռը լեռներ
էին շինվում և ուր նա երբեմն ձնագուռ էր
խաղում Ոգոստափառ երեխաների հետ: Գատչե-
նում, ուր նա անց էր կացնում տարվայ մեծ մա-
սը, ապրում էր որպէս հարուստ կալուածատէր:

«Նա զարմանալի կերպով սիրում էր այն ա-
մենը, ինչ որ ուսական էր: Նա ուսաց թա-
գաւորներից առաջինն էր, Եսան և Ֆեոդոր Ալեք-
սեւիչներին յետոյ, որ մօրաք էր պահում: Նա
սիրում էր ուսական կերպերներին, ուշադրու-
թեամբ կարդում էր ուսաց լրագիրներ, սիրում
էր գրականութիւնը, թշնամ էր տալիս նշանաւոր
ուսուցիչներին, այն համոզմունքն ունենալով,
որ նրանք ծառայում են հայրենիքին իրանց զը-
րուածքներով, և աշխատում էր խրախուսել ուս-
աց գեղարուեստը, մանաւանդ նկարչութիւնը և
երաժշտութիւնը:

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Հօդեմները 23-ին
Նախորդ նամակով յայտնեցինք, որ Գայնանան
դպրոցի աշակերտուհիների ծնողները կողմից մի
պատգամաւորութիւն գնաց Վեհափառի մօտ,
տանելով իր հետ յիսուսից աւելի ստորագրու-
թիւններով մի բողոք:

«Չէ կարող պաշտօնական իշխանաւոր լինել նոյն
տեղում, ուստի առնել նախագահութիւնը կրօն-
ուսուցիչի ձեռքից և յանձնել ուրիշի, գրում է
Վեհափառ ծնողների բողոքի առիթով իր ձեռ-
քով գրած հրամանի մէջ, մի և նոյն ժամանակ

Մի կողմից փարսեցիական վշտով չարաշու-
թիւն, որ կուսակցութիւններ կան մեր մէջ, խաւա-
րամիտները միւս կողմից օր օրի վրա միայն ի-
րանց անկողնոյտելի սեփականութիւնը կազմող
արտադրի մէջ են կատարելագործվում: Հեռու
քաղաքի հասարակական այլ և այլ պաշտօններից,
նրանք սրտատուփ հովանաւոր փէշեր են որոնում
և ամեն բոլք կանչում են. «հաւատներս հայհո-
յեցին, բռնել, պատժել, հեռացնել»:
Չէր տուրված սրտերին մի ուրիշ հանգստու-
թիւն չունենալ տալու, բայց միայն այն, որ կա-
սանք. կուսակցութիւնը այժմ աւելի քան երբ
իցէ հարկաւոր է, անհրաժեշտ է: Նա իր տեղը
կը մնայ: Իսկ դուք շարունակեցէ՛ք, մինչև որ բո-
ւորովին կը խեղովէք ձեր ստեղծած խօսքի մէջ:
Գայլի արտասուքը ընդունակ չէ մարդու մէջ
հաւատ և կարեկցութիւն հաստատելու:

Գրական շահաւոր այն ամենատխուր ժամա-
նակը, երբ այլ ևս սրբութիւն չէ մնացել առանց
բռնաբարկութիւն և պղծվելու, մենք մի առան-
ձին հետաքրքրութեամբ վերաբերվեցանք դէպի
պրօֆէսոր Նիկողայեանի յօդուածները: Վստա-
լուտուծու, ասում էինք, հայ գիտնական-
ներն էլ ձայն բարձրացրին: Կարդացինք այդ
յօդուածները և խոստովանում ենք, ամենածանր,
յուսահատեցնող սպաւորութիւն ստացանք:

Պ. պրօֆէսորը նեղութիւն է կրել երկար յօ-
դուածներով ցոյց տալ, թէ որքան հարկաւոր է
կարգ ու կանոն սահմանել մեր եկեղեցական
գործերի մէջ: Բնական էր սպասել մի գիտնա-
կանից լուրջ և բազմակողմանի ուսումնասիրու-
թիւն, թոյնի և ատելութեան պակասութիւն և
որ ամենալիսաւորն է—լայն ու լուսաւոր հա-
յեացքներ, գիտութեան անկողնապահ խօսք:
Բայց այդ բոլորի փոխարէն ինչքան ենք տեսնու-

հրամայելով՝ անպապող ուղարկել հոգաբարձական
ընտրութեան թղթերն իրան՝ ի հաստատութիւն:
Սակայն կիրեղ եպիսկոպոսը անձամբ գնաց էջ-
մրածին և երկ վերադարձաւ, բերելով իր հետ
ծնողների բողոքը. կաթողիկոսը բարեհաճել է իր
կարգադրութիւնը փոխել:

Մի անհաւատալի լուր է տարածվել այսօր.—
Գայնանան դպրոցի հոգաբարձութիւնը չի հաս-
տատվի, այլ նոր ընտրութիւն պէտք է լինի. բայց
թէ ինչու, այդ չէ ցիտենք: Ընտրված երկու հո-
գաբարձներն էլ կրթված, համալսարանական
մարդիկ են. ընտրութիւն տեղի է ունեցել մի
ամիս առաջ, օրինաւոր կերպով: Եւ ահա մի ա-
միս անցնելուց յետոյ՝ յանկարծ չէ հաստատվում
ընտրութիւնը:

Կիրեղը այս առաւօտ եկեղեցու բեմից մի ար-
տասովոր քարոզ խօսեց, և մի և նոյն ժամանակ
յայտնեց, որ բեկանում է թէ հոգաբարձական և
թէ նոյն իսկ պատգամաւորական ընտրութիւնը:

Ա—Դօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի աշուտականութեան պարագիտութիւն
Իսան Բաղրատիւն-Մալխանկին աշուտականու-
թեան կողմից վշտակցական հեռագիր ուղարկեց
Նորին Կոյսերական Մեծութիւն Նիկողայ Ալեք-
սանդրովիչ կայսրին: Աշուտականութեան պարա-
գիտութիւնը բաղդ ունեցաւ հետեւեալ պատասխան հե-
ռագիրն ստանալ Նորին Մեծութիւնից. «Անկեղծ
շնորհակալութիւն եմ յայտնում Թիֆլիսի աշ-
ուտականութեանը նրա արտայայտած վշտի և
տրտմութեան զգացմունքների համար, որ ամ-
բողջ Ռուսաստանը բաժանում է յմեծ հետ այս
ծանր օրերում: Շնորհակալ եմ ի ձեռքիս»:

Հաստատ աղբիւրից տեղեկանում ենք, որ ամե-
նայն հայոց կաթողիկոսը հոկտեմբերի 21-ին եր-
կու հեռու գիր ուղարկեց Լիվադիա: Այդ հեռա-
գիրներից մէկի մէջ յայտնում է իր ցաւակցու-
թիւնը թագաւոր կայսրի սգալի մահանալու առի-
թով, իսկ միւս հեռագրի մէջ Վեհափառը զգաց-
ված խօսքերով շնորհաւորում է Նորին Մեծու-
թիւն Նիկողայ կայսրի զանակալութիւնը:

Երկր, հոկտեմբերի 28-ին, դուրմայի դահլիճում
Թիֆլիսի մամուլի ներկայացուցիչների նախաձեռ-
նութեամբ կատարվեց հոգեհանգիստ Հանգուցեալ
կայսր Ալեքսանդր III-ի յիշատակին: Հոգեհան-
գիստին ներկայ էին Թիֆլիսի ուսաց, վրաց և

Պ. պրօֆէսորը մարտնչում է «յայտնի» կուսակ-
ցութեան դէմ, որը, նրա կարծիքով, կազմված է
«անհաւատ», կեղծ ինտելիգենտներից: Սկզբից
մինչև վերջը նա ճշմունք է եթէ ոչ հաստատել,
գոնէ լոկ բաւերով հաւատացնել, որ այդ կու-
սակցութիւնը անխիղաւորութիւն է մոցնում ժողո-
ւրդի մէջ: Սա ինքն ըստ ինքեան այնպիսի մի
սարսափելի բառ է, որ մարդ չը գիտէ թէ ինչ
պատասխանէ: Անխիղաւորութիւն... Բայց երբ
մտնող, ինչ գործի մէջ տեսաք դուք այդ բանը:
Անխիղաւորութիւն էք անուանում այն, որ պա-
հանջվում է իրաւունք, արդարութիւն, անխղճ
նապահութիւն:

Թէ մեզ հարկաւոր են որոշ ու պարզ կանոն-
ներ, այդ մասին շատ և շատ անգամ է խօսք ե-
ղել մեր մամուլի մէջ և պրօֆէսոր Նիկողայեան
մի նոր մտքի համար չէ այնքան նիզակներ կոտ-
րատում: Նորութիւնը այդ յօդուածներին մէջ հո-
գին է, որ բոլորովին այլ կերպ է բացատրում օ-
րենքի կարեւորութիւնը: Մեղանում պահանջում
էին օրենքներ բուն ժողովրդական իրաւունքների
տեսակետից, այն ինչ պ. պրօֆէսորը սահմանա-
փակումներ անդնեցական է առաջ քաշում: Նրա
կարծիքով հարկաւոր է խիստ կենտրոնացում,
պատշաճաւոր իշխանութեան կենտրոն և veto.
նա պահանջում է հեռացնել եկեղեցական գոր-
ծերից «անհաւատ» ինտելիգենտներին, ընտրա-
կան իրաւունքի տէր դարձնել այն մարդկանց,
որոնք իսկ և իսկ հայ քրիստոնեաներ են: Հիւ-
ցեք այս գոհարի վրա. Վեթի մի անհատ, որ ոչ
հաղորդվում է և ոչ կատարում է միւս խորհուրդ-
ները—գրանցով ապացուցանում է, որ նա եկե-
ղեցուն չէ պատկանում և ուրիշ մի չէ
կարող ծխական համարվել: Եւ ետոյ,
այդպիսի անհատներին նմանեցնելով կաթողիկի,
լուծարականի և մահմադականի, ասելով որ դը-

հայոց բոլոր լրագիրների և ամսագիրների ներկա-
յացուցիչները, ցենզուրական կոմիտէի նախա-
գահ Գալկէլ, Թիֆլիսի քաղաքագլուխ Խոմայով,
գնեւրալ Ամիրխանով, կառավարչապետ խոր-
հրդի անդամներ՝ Եսկիմով և Պրիլիպ, նախկին
քաղաքագլուխ Իշխ. Արզումանյան, քաղաքային
վարչութեան անդամները, և քաղաքացիական և
զինուորական վարչութեան ուրիշ պաշտօնեաներ և
հրեաներ:

Կ. Պոլսից մեզ գրում են. «Սերաստիայի ա-
ռաջնորդ Պետրոս եպիսկոպոսը պատրիարքարա-
նից թղթաւորութիւն էր ստացել Կ. Պոլիս գնալու՝
Թագաւորի դէպքի մասին մանրամասն տեղեկութիւն
հաղորդելու համար: Բ. Գուրը անմիջապէս գրեց
պատրիարքական տեղապահին՝ արգելել Պետրոս
եպիսկոպոսի գալը. տեղապահը անմիջապէս կա-
ռաւեց այդ կարգադրութիւնը, յայտնելով եպիս-
կոպոսին, որ այլ ևս Կ. Պոլիս չը գայ»:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի քաղաքացի
Գրիգոր Սարգսյանեան մի կտակ է արել, որով
կտակում է կովկասի հայոց Բարեգործական ըն-
կերութեան իր անշարժ կալուածքը, այն է՝ մի
երկրակտան քարաշէն տուն, իր բակով, բաժա-
նուններով և գետնով, 362 քառակուսի սաժէն
տարածութեամբ, որ գտնվում է Անդրեւսկի վո-
դցում, երկաթուղու կայարանի մօտ: Այդ տու-
նը արժէ մօտ 35—40,000 ռուբլի և բերում է
տարեկան 2000 ռուբլի եկամուտ: Քանի որ կեն-
դանի է Սարգսյանեանը, եկամուտն ինքն պէտք
է ստանայ, իսկ նրա մահից յետոյ ամբողջ տունը
պէտք է դառնայ Բարեգործական ընկերութեան
սեփականութիւն և ընկերութիւնը պէտք է գոր-
ծադրէ եկամուտները հայոց մատաղ սերնդի ուս-
ման համար: Կտակը հաստատված է նոտարիուս
Մամիկոնյանի մօտ, ներկայ թիւ փետրվարի 19-ին,
և վաւերացրած պատճէնն արդէն յանձնված է
Բարեգործական ընկերութեան խորհրդին:

Էջմիածնի վանքի գրամական նեղ գրու-
թեան մասին հաղորդած մեր լուրը բաւական
ծանր տպաւորութիւն է թողել մեր հասարակու-
թեան վրա: Եւ ճշմարիտ, ով կարող էր կարծել,
որ հայոց կրօնական կենտրոնի զանաւորներ կա-
րող է այնտեղ հասնել, որ նոյն իսկ ընթացիկ
ծախսերի համար փող չունենայ: Էջմիածնից մեզ
գրում են, որ մտադրութիւն կար աւանդա-
գրամն երին ձեռք տալ, բայց այդ անյարմար
համարվեց: Միակ ելքը փոխառութիւն անելն է,

բանը նոյնքան իրաւունք ունեն հայ համարվել,
որքան և «անհաւատ ինտելիգենտը», պ. պրօֆէ-
սորը կանգ է առնում այն միջոցի վրա, որ
պէտք է զանազան ոչխարներին այծերից. դա
այն է, որ պէտք է խտրութեամբ հրամայել քա-
հանաներին հակել, որ ծխականները «կատարեն
իրանց կրօնական պարտականութիւնները: Ապա
ովքեր են հարաբերւած հայ քրիստոնեաները: Պ.
պրօֆէսորը հաստատ պատասխանում է. «Վաճա-
ռականները, արհեստաւորները և տրիսաւոր գիւ-
ղացիք և նորից ու նորից կրկնում է. «չայստա-
տանեայց առաքելական եկեղեցու ոյժը միշտ
կաղմել է հաւատացող զանաւորը և ոչ թէ
կեղծ «անհաւատները»: Հիմանալի է հաւատացեա-
լի այս լոգիկան: Եւ ինչ է դուք գալիս: Նիկե-
ղեցուն հեռու քաղաքում պատուաւորներին, հա-
ղորդութիւն չառնողներին, ուրեմն, կատարելով
պ. պրօֆէսորի պահանջը, եկեղեցում կը մնան
միայն «տրիսաւորները», որոնք մի քիչ բարձր
արիւստօկրատների լեղումով կոչվում են «ամբոխ»:
—Իսկ ինչ է ամբոխը. պ. պրօֆէսորը շտապում
է ջնջել և նրան, առաջ բերելով Տօկլիլի խօս-
քերը Փրանսերէն և կողքին դնելով հայերէն հա-
րազատ թարգմանութիւնը: «Ամբոխի բռնակա-
լութիւնն, բացատրում է պ. պրօֆէսորը, աւելի
վտանգաւոր է հասարակութեան համար, քան
թէ առանձին անհատի, որովհետեւ մի անհատի
հետ աւելի հեշտ է մարտնչել և նրան զսպել, քան
թէ մեծամասն ամբոխը: Այս տեսակետից ցան-
կալի չէ ամբոխի տրիսաւորութիւնը ընտրողա-
կան գործում. և պ. պրօֆէսորը վրդովվում է,
յիշելով որ՝ Թիֆլիսի վերջին ընտրութիւնների
ժամանակ ամբոխն էր գործում—Այսուհետեւ ե-
կեք և հասկացե՛ք, թէ էլ ով պէտք է մնայ եկե-
ղեցում, երբ «անհաւատները» և ամբոխը հեռաց-
րած պէտք է լինեն: Պարզ չէ. նրանք պէտք է

որի մասին այժմ մտածում են էջմիածնում փոխառութիւնը ուզում են անել Պետական բանկի ներքին բաժնուհի:

Այս օրերս լոյս տեսաւ տիկին Մարիամ Խաչատրեանի մի նոր վէպը «Փետայ որսորդներ» անունով: Այդ վէպը, որի նիւթը վերցրած է թիֆլիսի հայերի կիսաաւանական կեանքից, շուտփոխ է մի քանի հասարակական և բարոյական խնդիրներ: Վէպի բովանդակութեան հետ մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին:

Անդադար բազմաթիւ թղթակցութիւններ և նամակներ ենք ստանում Շուշուց՝ թեմական զբոսայգիի գործերի մասին: Ի գիտութիւն նամակագիրներին, հարկաւոր ենք համարում յայտնել, որ այդ թղթակցութիւնները անկարող ենք տպագրել:

Կ. Պօլսի լրագիրները տպագրել են Եղգաղի զէպի պատճառով բանտարկւածների ազատութեան լուրը:

Մենք ստացանք Պետերբուրգից մի տպագրած նամակ, որը ցոյց է տալիս, թէ մի պարոն, Միլայէլ Ֆետորով՝ Բարձրագոյն թոյլտուութիւն է ստացել 1895 թ. յունվարի 1-ից հիմնելու հեռագրական գործակալութիւն: «Ռուսական հեռագրական գործակալութիւն» անունով:

Վրաց յայտնի գրող Ն. Նիկոլաձէ, ինչպէս հեռագրում են «НОВОЕ ОБОЗР» լրագրին, միաձայն ընտրւած է փոթիի քաղաքագլուխ: Ծնորդաւորում ենք այդ աճող ընտրութիւնը:

Մեր թղթակցը հաղորդում է նրանից, որ Սեդրակ Մանդինեան հրաւեր է ստացել Շուշու թեմական զարդի տեսչի պաշտօնի համար: Թղթակցի կարծիքով հաւանական է, որ Մանդինեան կերթայ Շուշի:

Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ, հոկտեմբերի 27-ին թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում մեռաւ խոլերայով մի հիւանդ, Սոֆրոն Կապլայա անունով:

Նիկեիտի մեզ գրում են, «Թագաւոր Կայսրի մահւան լուրը խորին վիշտ պատճառեց. ահա երբորդ օրն է, որ խառնութեամբ կողպւած են և չաւրանակ թէ եկեղեցիներում և թէ մզկիթներում հոգեհանգիստներ են կատարւում»:

մնան, որոնք «դամնայն զգործս իւրեանց սուրհան ի ցոյցս մարդկան. լայնեն զգրապանակս իւրեանց, և երկայնեն զըզանցս հանդերձից իւրեանց: Սիրեն զյառաջագան յընթրիս, և զնախաթուս ի ժողովուրդս, և զողջոյնս ի հրապարակս» և որոնք մասին ասւած է. «Այժմ դուք փարիսեցիք դարտաքին բաժակին և զպնակին սրբէք, և ներքինն ձեր լի է յալիշտակութեամբ և չարութեամբ»:

Սահմանափակումների և կրօնական—ընտրական ցնցի միտքն էլ նորութիւն չէ: Դեռ անցեալ ձմեռ Հայաստանայց եղութաներն էին այդ մի և նոյնը առաջարկում: Նրանց համար իսկ որ փրկութեան միակ միջոցը դա էր. չէ որ եթէ ընդունվէր այդ առաջարկութիւնը, միմիայն նրանք կարող կը լինէին ապացուցանել հրապարակներում, որ կարելի է եկեղեցու կանոններն էլ կեղծել, երբեք պատ չը պահել, բայց միշտ բղաւիլ թէ պէտք է պատ պահել, երբեք ճշմարտութիւն չը ճանաչել, և միշտ խօսել ճշմարտութեան անունից: Քննել եկեղեցու իշխանաւորներն մօտ, չորհրդով, անամօթ կերպով գովաբանել նրանց և կեղծ ջերմութեամբ կատարել տալ այնպիսի ձէներ, որոնք չեն պահանջում փափուկ պահած մարմնի համար որ և է դժուարութիւն...

Սրանք են մնում, պ. պրոֆէսոր, երբ եկեղեցուց հեռացվում է ամբողջ և նրա հետ ձեր երեւակայած անհաւատա ինտելիգենտը: Ահաւատ... ինչով էք չափում մարդկանց հաւատը.—արտօքին ձևականութիւններով: Որտեղից վերցրեք այդ չափը: Հաւատի երկնային Հիմնադրին էլ էին ուղղում այդպէս չափել. փարիսեցիները սարսափահար աղաղակւած էին, թէ նա չէ կատարում հայրենի կարգերը, ձէները: Բայց նա իբրեւ մարմնա-

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են հոկտեմբերի 26-ից. «Ներէկ էջմիածնից այստեղ հասաւ Նահապետեան վարդապետը, որը կ'աթողիկական հրահանգներով եկել է թեմական զարդի խճճւած գործը կարգի բերելու»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ ԱՆԷՔՍԱՆԻՐ III-ի ՄԱՀԱՆ ԱՌԻԹՈՎ

Ամբողջ եւրոպական մամուլը համակրական յղուածներ է նուիրում հանգուցեալ թագաւորի յիշատակին: Անգլիական «Daily News» լրագիրը ասում է, որ հանգուցեալ Կայսրը թողեց Ռուսաստանին մի զօրեղ դաշնակից, և չը թողեց ոչ մի թշնամի: «Times» լրագիրը նկատում է, որ հանգուցեալ Կայսրի քաղաքականութիւնը ներշնչւած էր բարձր և լաւ հայեացքներով ու զգացմունքներով և պարտաւորութեան հաստատ գիտակցութեամբ: «Standard» նկարագրում է Հանգուցեալի հերոսական անձնաւորութիւնը և արիւթիւնը: «Daily Telegraph» ասում է, որ Ալեքսանդր III Կայսրի մահը մի հարուած է, որ ծանր կերպով կը դգան կրթւած աշխարհի բոլոր ժողովուրդները:

Ֆրանսիական բոլոր լրագիրները, որոնցից չաւերը դուրս եկան սև շրջանակներով, ցաւ են յայտնում թագաւորի մահւան առիթով: «Figaro» լրագիրն ասում է. «Տգաւորութիւնը անկեղծ է. ցաւում են ոչ միայն արդար մարդու, այլ և Կայսրի մասին, որը աշխարհի մեծ գաղափար էր: Աշխարհի համակրութիւնը, մանաւանդ Ֆրանսիայի համակրութիւնը, ապահոված են Նրա Յաջորդի համար: «Journal des Débats» լրագիրը մասնացոյց է անում Կայսր Ալեքսանդրի մեծ յատկութիւններին վրա, որը «չը վախեցաւ դաշն կապել զէմկրատիական հանրապետութեան հետ» փորձը համոզեցուցիչ էր, երբեք աշխարհս այդպէս ապահոված չէ եղել և յոյս ունենը, որ ամեն բան առաջվան պէս կը մնայ: «Gaulois» լրագիրը ասում է, որ Ռուսաստանը և Ֆրանսիան քոյրեր են, որոնք ողբում են իրանց հորը:

Աւստրիական լրագիրները համակրական յղուածներ են նուիրում թագաւորին: «Freundenblatt» լրագիրն ասում է. «Թագաւորը եւրոպական խաղաղութեան սիւնն էր. ժողովուրդներն նրան են պարտական իրանց հանգուցութեամբ, որի շնորհիւ հնարաւոր եղաւ տնտեսական կեանքի ընդհանուր բարեօրոշմն: Իր երկրի համար Ա-

լեքսանդր III ազգային Կայսր էր: Նոյն կարծիքն է յայտնում և «Presse» լրագիրը: Ունգարական լրագիրներն ասում են, որ ունգարական ազգը բարձր էր գնահատում Ալեքսանդր III-ին նրա ընդունակութիւնների համար, որպէս կառավարչի: Ունգարական ազգը բաժանում է ուսաց ժողովրդի վիշտը և ունգարացիները նոյնպէս չոր աչքերով չեն կանգնած քաղաքաշար մարդու զագաղի մօտ:

Գերմանական Nord. Allg. Zeitung» նուիրում է ուսաց Կայսրի յիշատակին մի երկար յղուած, որի մէջ մասնացոյց է անում նրա անյողող պարտաճանաչութիւնը: Հանգուցեալ Կայսրը, ասում է լրագիրը, ամենաքնքշող ամուսին էր և ընտանեւէր ծնող: «Kreuz. Zeitung» լրագիրը Գեթտինց հաղորդում է. «Թագաւորական գրէնադերեան գնդի ճաշին Կայսրը մի ճառ արտասանեց: Մի փոքր յետոյ տեղեկութիւն ստացվեց թագաւորի մահւան մասին: Կայսրը երկրորդ անգամ վերկացաւ տեղից: Յայտնելով թագաւորի մահւան մասին, որպէս մի ծանր և նշանաւոր անցքի մասին, Կայսրը ասեց, «Յիշելով աւանդութիւնը, որ մեզ միացնում է ուսաց Կայսերական ճան հետ, ցանկանը, որ Աստուած տայ Նոր Կայսրին ոյժ՝ իր ծանր կոչումը կատարելու համար: Կեցցէ Կայսր Նիկոլայ II, ուրաշ: Նրա ժառանգական խումբը կատարեց ուսաց ազգային օրհներգը: Խաչակրան լրագիրները ևս զովքանում են Ալեքսանդր III-ի առաքելութիւնները, որպէս խաղաղութեան պաշտպանի, և վստահութիւն են յայտնում Նրա Յաջորդին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ԼիվԱՆԻԱ, 26 հոկտեմբերի: Այսօր, հոկտեմբերի 25-ին, արժանայիշատակ թագաւոր Կայսրի մարմինը զրվեց դադաղի մէջ և 6 ժամ 40 րոպէին փոքր պալատից դուրս բերեցին: Թագաւոր Կայսրը, թագաժառանգ Յէսարէլիչը, Ուէլսի պրինցը, արքայորդի Նիկոլայ, Միխայիլ, Վլադիմիր, Ալեքսի, Սերգի, Պաւլէ Ալեքսանդրովիչ Մեծ Իշխանները, Սիկայիլ Նիկոլայիւ, Նիկոլայ, Կէօրզի և Ալեքսանդր Միխայիլիչ Մեծ Իշխանները զէպի Լիվադիական մեծ եկեղեցին: Թագաւոր Կայսրը տանում էր դադաղը զլիւի կողմից. Նորին Մեծութիւնը հագած ունէր Պրէօրրաժէնեան գնդի լէյթ-գլխարկայի հա-

ղատ ընտրողական սկզբունքի վրա է հիմնած: Կօնտրոլ, veto, սահմանափակում պահանջող մարդը նախ և առաջ պէտք է իմանայ, թէ ինչպէս են կատարվում գոյութիւն ունեցող աղքատիկ օրէնքները, կանոնները: Նրանք մոռացվել են, ոտի տակ տրոլվում են ամեն օր, ամեն ժամ: Երբ ժողովուրդը պահանջում է օրէնք և արդարութիւն, դուրս է դալիս Արամազդային բարձրութիւնը, որ ատեւութեամբ նայելով ամբոխին, պահանջում է զսպել, սահմանափակել, ձևերի տակ թաղել կենդանի գործը:

Պ. պրոֆէսորը կամենում է հաւատացնել, որ ինքը որ և է կուսակցութեան չէ պատկանում. Բայց սրանք լոկ դատարկ խօսքեր են: Եթէ այդպէս չէ, ինչեւ թիֆլիսի ընտրութիւններին պ. պրոֆէսորը նայում է «Արձագանքի» և նրա ասածին պատահանով. «Գոնէ որքան լրագրութեան նկարագրվում էին ընտրութիւնները, ես ամեն տեղ տեսնում էի անկանոն ամբոխ (толпа) իր դուռում գտնւում: Անկողմնապահ մարդը կուրանայ միւս լրագիրները, որոնք բոլորովին հակառակն էին պնդում: Բայց ինչ անէր պ. պրոֆէսորը. եթէ չուրանար, էլ ինչպէս կարող կը լինէր գրել այն անաղին ամբառաւանական ճառը, որի մէջ ընթերցողի աչքերը ծակոտում են Եանիշխանական, Էկեղծ ինտելիգենտա, Եանահաւատ և այլ այսպիսի բառեր, բառեր, որոնք բարեմտութիւն, անկողմնապահութիւն քարոզող մարդու համար սուր սլաքների դերը պիտի կատարեն:

Այդպէս են ուսուցանում մեզ գիտուն համարվողները: Ահա մեր իրեանքները, մեր ձեռք տուները: Այսպիսի կապալանքներով պիտի մենք չարմվենք զէպի առաջ:

Ո՛չ, հաւատացրե՛ք թէկու՛ղ հարկւ՛ր անգամ, որ դուք Հայաստանայց եկեղեցու հաճախող դա-

մազեւոր, որ համազգեստով էլ զրված է զազաղում և հանգուցեալ Կայսրի մարմինը: Բացի Բարձրագոյն Անձինքներից դադաղը տանում էին Պալատի մինիստր կոմս Վորոնցով-Կաշկով, Կայսերական զըլխաւոր բանակի հրամանատար գեներալ-ադիւտանտ Ռիստէր, գեներալ-ադիւտանտ Չերէվին, իշխան Բարխատինսկի և պայծառափայլ իշխան Գօլցին: Կազաղը ընդունեցին պատգարակի վրա Նորին Մեծութեան սեփական թիկնապահները: Կազաղի ետեւից գնում էին թագուհի Կայսրուհին, Ուէլսի իշխանուհին, Բարձր Հարսնացուն, Մեծ Իշխանուհի Կսէնիա Ալեքսանդրովնա, Մեծ Իշխանուհի Օլգա Ալեքսանդրովնա, յունաց թագուհին, Կօրուրդ-Գօլցեան զըքսուհին, Մարիա Պաւլովնա, Ելիսաւետա Ֆէօդորովնա, Ալեքսանդրա Եօսէֆնա Մեծ Իշխանուհիները, Նորին Մեծութիւն թագուհու Կայսրուհու Ֆրէյլինները և պալատական տիկիները: Տնուր յուղարկաւորութեան հանդէսը անցաւ Լիվադիայի պարկի միջով: Զանապարհի վրա երկու կողմից զրված էին արմաւենիներ, դալիսայ ծառեր, օյնանդրներ և լուսաւորված էր ջահերով, որ ձեռքերում բռնած ունէին Նորին Մեծութեան սեփական թիկնապահները: Լիվադիայի մեծ եկեղեցու հանդէպ կանգնեցրած էր 16-դ հրացանաձիգ գնդի պահակը: Գոյալով և երաժիշտների խմբով: Ժողովուրդը խիտ բազմութեամբ շրջապատել էր փողերի հրապարակ: Լիվադիական մեծ եկեղեցու մօտ սկսվեց զանազարկութիւնը, ամենքը զլխարկները հանեցին: Միջնորդէմին փայլում էին ջահերը: Հոգեւորականների երկար շարքը, արծաթէ շուրջաններով, դուրս եկաւ եկեղեցուց դիմաւորելու մարմինը: Հեռուից լսվեց երգեցողութիւնը: Ծուռով երևաց արարողապետ իշխան Ուրուսով, որը բաց արաւ ընթացքը. երաժշտութիւնը ամեց Պրաւաւանը՝ և ապա արգի՛ք: Զանապարկութիւնը շարունակվում էր: Արարողապետի ետեւից տանում էին լապտեր: Թագաւորի նաւի թիվարկների աւազն էր տանում խաչեկութիւնը, ապա երեւացին խաչակրները, գնում էին երգիչները, հոգեւորականութիւնը, դադաղի առջեւից գնում էր հանգուցեալ Կայսրի խոստովանաչայր Եանիշիվ պատկերը ձեռքին: Բոլորից բարձր երեւում էր դադաղը, լուսաւորված ջահերով: Կազաղը ծածկված է ոսկէ կանաչ գիւպակով: Կազաղի վրա զրված է թաղը, որ բերված է Մոսկվայից. դադաղի երկու

աւին էք, որ դուք անկողնապահ էք, զրէք թէկու՛ղ ձեր ամբողջ ինքնակենսագրութիւնը, որի մի կտորն էք միայն հաղորդում բայց և այդպէս, հաւատալ չի լինի, քանի որ ձեր խօսքերից սառնութիւն է փչում, քանի որ ձեր ձեռքի չափը անհոգի ձեռնադրութիւնն է, ձեր դաւանանքը բռնաճնդ սկզբունքներն են: Չեղ չեն օդն Տօկվիլները. նրանք գործ չեն ունեցել մեզ պէս մի աւսիական թմբած ժողովրդի հետ, որի մահացող հիւանդութիւնը կատարեալ անտարբերութիւնն է, որին պատժել է և պատժում է պատմական խաւարը: Այդ ազգը նոր սկսում է զգալ, մտածել: Իդուր էք աղաղակներով վախեցնում նրան. կան մենում էք ծառայել նրան, ցոյց տուէ՛ք զէպի բարին ու գեղեցիկը տանող ճանապարհը, առաջ-նորոգեցէ՛ք նրան լուսաւոր, կենդանացնող դարափարկներով: Միջնադարեան ուրուականները, որոնց այժմ օգնութեան էք կանչում մարդկանց սիրտը չափելու և ճանաչելու, վաղուց են չքացել:

Խնցէ՛ք ուսաց լաւագոյն մտածողներից մէկի այս խօսքերը: «Ամեն տեղ ամեն բանի մէջ նկատելի է ինքնաճանաչութիւնը և ամեն տեղ հասկացված է իրեն ինքն ինքն անանկութիւնը. ամեն տեղ սպասում են ընթերցողի և շտկանների, և ոչ ոք այլ ևս չէ օրորում իր դաւանքներն այն երդը երգելով, որ զովքանում է գործերի ժամանակակից կարգի անհասանելի կատարելութիւնը: Բնականաւան, այժմ ամեն մէկն է սպասում, ամեն մէկն է յոյս տածում, և երեւանները այժմ մեծանում են տոգորված գեղեցիկ ապագայի յոյսերով և ցնորքներով: Եւ ոչ թէ զոռով կապված լինելով մեռած անցեալի դիակին»:

Կանքը գործ է:

կողմից դնում էին և պալատական գրէնա-
դէրները և թիկնապահ գնդի զինւորները
վառած ջահերով: Կազմակերպութեան
էին՝ Բարձրագոյն Պալատի պաշտօնա-
ները և թագաւոր Կայսրին, Մեծ Իշխաննե-
րը և օտարազգի պրինցները ավիտանե-
րը: Երբ հոգեւորականութիւնը դիմաւորեց
մարմինն տաճարի աստիճանների մօտ, թա-
գաւոր Կայսրը և Մեծ Իշխանները ընդու-
նեցին զազաղը, ներս տարան եկեղեցի և
դրեցին ոսկէ շղարշով շրջապատած վարդա-
գոյն թաւշայ դիակայի վրա: Կրանից յե-
տեյ հոգեհանգիստ տեղի ունեցաւ: Այն
բարձր տեղը, ուր դրված է դիակայը, ծած-
կված է կարմիր մահուգով և աստիճան-
ներից իւրաքանչիւրը շրջապատված էր ոսկէ
շղարշով: Բարձրագոյն տեղի անկիւններում,
պատամէնաների վրա, որոնք նոյնպէս կար-
միր մահուգով էին ծածկված, զրկված էին
արմաւենի ծառեր: շրանշանները զրկված
են ոսկէ դիակայի բարձրի վրա: Կիակայի
վրա զազաղը դնելուց յետոյ, հերթակա-
լութիւն է սահմանված: Կազմված բացված
է և ժամատացութիւնը աւարտելուց յետոյ
Լիվադիայի և Նալտայի հասարակութեանը
թոյլ տրվեց մանկ և երկրպագել աճիւնին:
— Մայրաքաղաքի լրագիրների խմբագիրնե-
րը և հրատարակիչները Լիվադիա Կայս-
րուհուն ուղարկած իրանց հեռագրին, ստա-
ցան հետեւեալ պատասխանը. «Թագուհի
Կայսրուհին հրամայեց ինձ հաղորդել ձեզ
իւր խորին շնորհակալութիւնը այն զգաց-
մունքների համար, որ արտայայտված են
հեռագրում և որոնցով ներշնչված են այն
բոլոր յօդուածները, որոնք նուիրված են իւր
հանգուցեալ Սուրբատիւն Ամենուն: Կոմս
Վորոնցով-Կաշկով:»

ՄՍՍԿՎԱ, 27 հոկտեմբերի: Քաղաքագրուելը
Մոսկվա քաղաքի համար իրաւունք ձեռք բե-
րեց կառուցանել մէկ առանձին պատճօր-
մա—վրան Կայսրնշխակայ հրապարակի
վրա, որպէս զի Մոսկվան կարողանայ դի-
մաւորել հանգուցեալ Կայսրի մարմինն ի
տես ամբողջ ազգաբնակչութեան: Պատճօր-
ման շինելու աշխատանքները առաջ են ըն-
թանում: Սկսելով վաղանցիկ և կամարներ
են կառուցվում ախուր հանդիսի գնալու
ճանապարհի վրա, այն է՝ քաղաքային դու-
մայի մօտ, թատրոնական հրապարակի վրա,
պատմական թանգարանի հանդէպ, Լու-
բանսկայա հրապարակի վրա, Մեծանիցի-
վորտա անուանված փողոցի վրա: Եւ տեղ
տեղ կը կանգնեցնեն սղային առաջատա-
ներ: Կարմիր դռները, դումայի ֆասադը,
չինական պատը, դրան կպած մասնաւոր
տները, պատշաճվանքները և սրահները սե-
մահուգով են ծածկվում: Մոսկվա-Կազա-
նեան երկաթուղու կայարանի բնադանեան
սրահից կամարներ են շինվում սպիտակ
կտորի վրա զրկված հետեւեալ վերտառու-
թեամբ «Հանգիստ քո նշխարներին»: Կրէմ-
լում Կարմիր սանդուխտներից դէպի Ուս-
պէնսկի վանքը և այնտեղից դէպի Չու-
զով վանքը շինվում է սաղայատակի Սան-
դուխտը և սաղայատակի սե մահուգով են
ծածկվում:—Մոսկվայի տիկնիւնների հեռագրին,
որ ստորագրել էր Նոյն Մեծութիւն Կայս-
րուհուն ֆրէյլինա երմոլովա, բարձր Հարս-
նացուից հետեւեալ պատասխան ստացվեց.
«Խնդրում եմ հաղորդել Մոսկվայի տիկնի-
ւններին իմ արտադին երախտազնութիւնը
այդքան արտաուշ կերպով արտայայտված
զգացմունքների համար: Հոգեւոր միութիւ-
նը Ռուսաստանի հետ, օրհնութիւնը, որ
ես ստացայ ի Տէր հանգուցեալ թանգագին
թագաւոր Կայսրից, և վատահոյութիւնը ուս-
տիցովի աղօթքների վրա՝ ոյժ են տալիս
Մեզ Աստուծու կամքով մեր կրած սարսափե-
լի օրերում:»

ՄՍՍԿՎԱ, 27 հոկտեմբերի: Այսօր Ար-
խանգելսկի տաճարում պատրաստութիւն-
ներ սկսվեցին հանգուցեալ թագաւոր Կայս-
րի մարմին այնտեղ ժամանակաւորապէս
մնալու համար, տաճարը սզագրեաց է
դառնում: մէջտեղում ամպհովանի է շին-
վում, բարձի վրա կայսրական թագ, դա-
ղաղը զրկված կը լինի սեւապատ ու-բարձր
դիակայի վրա, զրկված սաղայատակի վրա:
Տխուր հանդիսին կը մասնացնի Մոսկվայի
ամբողջ հոգեւորականութիւնը սզագրեալով

և վառած մոմերով, իսկ եկեղեցիներում
զանգահարութիւն կը լինի: Նիկոլաեվա-
կայա երկաթուղիական կայարանը պատ-
րաստվում է ընդունելու սղային գնացքը.
շինվում է մի առանձին ընդարձակ պատ-
ճօրմա պալիլինով: Կայսրանը ինքն ամ-
բողջապէս սե մահուգով կը ծածկվի: Որ ու-
գիշեր լանում են: Քաղաքը գնալով աւելի
և սզագրեաց է դառնում: մանաւանդեալ տեղի
է Տիբրսկայա, Կուզնեցկի կամուրջ և Մեռա-
նիցկայա փողոցների վրա: մի քանի տնե-
րի վրա բոլոր պատերը ծածկված են սե-
կտորով: Պատուհաններում հանգէս են դըր-
ված հանգուցեալ թագաւոր Կայսրի պատ-
կերները և կիսարձանները կանաչների և
արծաթէ պսակների մէջ սղային ժապա-
ւէններով: Կաւառներից բազմաթիւ պատ-
ւէրներ են տուել սակրիչների մագաղի-
ւներին՝ պսակների համար:

ՄՍՍԿՎԱ, 27 հոկտեմբերի: Հանգուցեալ
թագաւոր Կայսրի զազաղի համար պսակ-
ների պատւէրները այնքան շատանում են,
որ խոշոր սակրչային մագաղիւններից մի
քանիսները սկսեցին մերժել պատւէրներ
ընդունել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 հոկտեմբերի: Կայսրա-
կան Պալատի միւնիստրը տեղեկացրեց Լի-
վադիայից ներքին գործերի միւնիստրին,
թէ Բարձրագոյն բարեհաճութիւն է տրված
ընդհանուր ժողովարարութիւն անել Մոսկ-
վայում արձան կանգնեցնելու ի Տէր հա-
նգուցեալ Կայսր Ալէքսանդր III-ի, Մեծ
խաղաղարարի համար:

Լիվադիա, 27 հոկտեմբերի: Լիվադիայի
մեծ եկեղեցում հանգուցեալ Կայսրի մարմ-
նի մօտ երէկ հոգեհանգուցեան պատա-
րագ մատուցեց Տաւրիկեան եպիսկոպոսը
բազմաթիւ հոգեւորականութեան հետ միա-
սին, ներկայութեամբ թագաւոր Կայսրի,
Կայսրուհուն, թագաժառանգ ցեսարիւիչի,
Բարձր Հարսնացուի, Բարձր Էլիսաբէթ, Մեծ
Իշխանների և իշխանուհիների: Կէսօրից
յետոյ 2 ժամին հոգեհանգիստ կատարվեց
Լիվադիայի մեծ եկեղեցում: Բարձրագոյն
Անձանց ներկայութեամբ: Այսօր երկրպա-
գութիւն տուեցին մարմինը զօրքերը և
Նալտայի, Լիվադիայի և շրջակայների ազ-
գաբնակչութիւնը: Կիակայի պատուանդանի
վրա զրկված են բազմաթիւ պսակներ: Այ-
սօր առաւօտան Մեծ Իշխաններ վաղի-
միր Ալէքսանդրովիչ իւր Ամենու հետ,
Պալէ Ալէքսանդրովիչ, Մեծ Իշխանուհի
Ալէքսանդրա Նոսիֆովնա, Միխայիլ Նիկո-
լաեվիչ և Գէորգի Միխայիլովիչ Մեծ Իշ-
խանները Նալտայից ճանապարհ ընկան
Պետերբուրգ: Այսօր նոյնպէս ճանապարհ
ընկան դէպի Մոսկվա Մեծ Իշխան Սերգի
Ալէքսանդրովիչ իւր Ամենու հետ:—Նշա-
նակվում են գնեղաւաղիւտանտ Զերե-
վին—հերթակալ գնեղաւ Նոյն Կայսրա-
կան Մեծութեան մօտ: Թագաժառանգ Տէ-
սարեվիչի աղիւտանտ կալայեղբարդան
գնդի բոտմիստը իշխան Կոնստէն և Էյր-
զվարդիայի հուսարների գնդի պորուչիկ
կոմս Վորոնցով-Կաշկով—Նոյն Մեծութեան
մօտ ֆրիգել-աղիւտանտներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 հոկտեմբերի: Պետրո-
պոլսկի մայր տաճարը շտապով զար-
դարում են, գերեզմանը շինվում է սիւնե-
րի ձախ կաղնու: Էստրադայի վրա, որը
ծածկված է կարմիր մահուգով, ամպ-
հովանի է շինվում: վերեւում զրկված է Մո-
նօմախի գլխարկը, որի տակից իջնում են
սպիտակ աքիսի մօրթով աստուած դի-
պակի կտորները: ամբողջ տաճարի յատակը
ծածկվում է սե մահուգով: Էստրադայի
շուրջը և Էստրադայի վրա զրկված են 40
աշտանակներ, տաճարի պատերը և սիւնե-
րը ծածկվում են սե մահուգով: Կայսր Ալէք-
սանդր III-ի շիրիմը գտնվում է Մարիա Ա-
լէքսանդրովնա Կայսրուհուն շիրիմի մօտ:
Բոլոր աշխատանքները կատարվում են ճար-
տարապետ Սալիօի հսկողութեամբ:—Բու-
խարակն էմիրի յանձնարարութեամբ, Կայ-
սր Ալէքսանդր III-ի գերեզմանի վրա զրկ-
ված է թանգագին արծաթէ պսակ:
ԽԱՐԿՎԱ, 27 հոկտեմբերի: Խարկովի մի-
ջով հանգուցեալ թագաւոր Կայսրի մարմին
տանելու հետեւեալ օրը, քաղաքի մէջ,
Բարձրագոյն բարեհաճութեամբ, հոգու հաց

կը տրվի 7500 աղքատներին: Ճաշը կազ-
մակերպելու համար նահանգապետը մի
առանձին յանձնաժողով կազմեց 14 ան-
ձիքներից:

Թագադիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՆԴԻԵՎԱ

ԵՐԵՒԱՆՈՒՄ ընդունում է հիւանդներ
ամեն օր առաւօտան 10—12 ժամը: Զը-
քաւորները ընդունելու թիւը ձրի
է: Բնակարանը գտնվում է Աստաֆեան փո-
ղոց, տուն № 45:
5—5 (5.) (№ 112)

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ


Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ներկայ տարվայ խօլերային հի-
ւանդութիւնների մեծամասնութիւնը կապ ունի Կուրի ջրի խմելու հետ, ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՄԱՆՈՎ ՀՐԱԻՐՈՒՄ Է ԱԶԳԱՔՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՆՊԱՅՄԱՆ ԶԳՈՇԱՆԱԼ
ԿՈՒՐ ԳԵՏԻՑ ՎԵՐՑԱՄ ԶՈՒՐԸ ԽՄԵԼՈՒՑ, ՆՈՅՆՊԵՍ ԵՒ ԱՅԻ ԶՈՒՐԸ ՏՆԱՅԻՆ ԶԱ-
ՆԱԶԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԾԵԼՈՒՑ, մանաւանդ որ քաղաքային զուժայի բը-
ժիշկ Բելազաւմը Կուր գետի մէջ գտել է խօլերային բացիլներ:

(№ 123) 2—2

Ի. Ա. ԲՐՕՆ ՖՕՆ ԲՐԵՆՆԵՐ

Յանձն է առնում ՀԱՇՈՒՊԱՀԱԿԱՆ. ԳՐԱՆԵՆԱԿԻ և ԱՌԵՏԻՍԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ
պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ուսուցել, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն
և օրիշ լեզուներով, ատուցում է զանազան տեսորական և արդիւնարական հաստատու-
թիւնների հաշիւները և մատնանքներ, քննում, փակում, բանում, և կազմում է առեւտ-
րական մատնանքներ, ընդունում է առեւտրական մատնանքների զանազան թիւրխացու-
թիւնների քննութիւնը և բացատրութիւնը:
Այն անձինք, որոնք չունեն հաշւապահներ, բայց ցանկանում են
ունենալ կանոնաւոր հաշւապահութիւն, կարող են ունենալ ձեռք ՏԵՂԵ
ԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՅԻՄ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՐՄԱՏԵԱՆՆԵՐ: Մա-
տեններ պահելու համար վերցվում է տարեկան 100 ռուբլի և աւելի: Հասցէն ԵԼԻՅԱՎԵՏԻՆ-
ՏԿԱՆ, № 25, ոստիկանական վարչութեան վերին յարկում:
Ռուսացանում է:
ՀԱՇՈՒՊԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՈՒԹԻՒՆ

Վճար } Հաշւապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս) 40 ՐՈՒԲԼԻ
} Արաքաղաքութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՐՈՒԲԼԻ
Պարագմունքներ յինում են ամեն օր, երկու ժամկալ ընթացքում: Առա-
ջագէտ պարագմունքների համար Վ.Ա.ՅԱՄԱՆՆԵՐ ԲԵՆԿԱՆ ԳՅՈՐԾԻ և օրիշ
անձերից: (№ 16) (2) 34—100



ՀԵՌԱՌՈՍ № 104 ՀԵՌԱՌՈՍ № 104

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ ԾԻԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը, բացի բազմաթիւ բարձր շրանշանների, արժանացած է նաեւ ներկայ 1894 թվին
ՈՍԿԵ ՄԵՒԱԼԻ—ԱՆՏՈՎԵՐԻՅԻՆ, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻԱՌՈՐ ՊԱՐԳԵՆԵՐԻ—ԼԻՈՆԻ յու-
ցահանդեսներում

Առաջարկում է նոր պատրաստած
ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

- „Наприть“ 25 հատը 15 կոպ.
- „Рекомендационные“
- „Театральные“ 10 հատը 5 կոպ.
- „Флора“
- „Экономные“ 10 հատը 3 կոպ.

Կարելի է առնել զործարանից և իսկական ծխախոտաւաճառների մօտ:
Ուղարկելու ծախսը գործարանի վրա է: (№ 104) 0—11

ՎՐԱՍԱՆԻ ԵՒ ԽՄԵԼԹԻ ՀԱՅՈՑ վիճակային կոնսիստորիայի ատենի մէջ նշանակ
ված է ԱՃՈՒՐԴ 31-ին սոյն հոկտեմբերի, առանց կրկնաձուլի, վարձով տալու
համար էջմիածնապատկան եռայարկ տունը 6-րդ քաղաքամասում և այգին Օրթաձա-
լայի

Անդամ կոնսիստորիայի՝ Համազասպ վարդապետ
(№ 121) 3—3

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԳՊՐՈՑ

Բ Ա Գ Ր Ո Ւ Մ

Ընդունում եմ աշակերտուհիներ և տա-
լիս եմ կար ու ձեռի դասեր շատ մատչելի
գնով:
Հասցէն. Բագու, Արմենակի փողոց, տուն
Կրասնիկեանցի:

ՏԻԿԻՆ Ծ. ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑ
(№ 124) 2—3

Ցանկացողները պէտք է իրանց երգերը,
բանաստեղծութիւններն ու ոտանաւորները
աշխատեն ուղարկելու, ՍՈՒԱԿ ՀՍԵԱՍ-
ՏԱՆԻ՝ ազգային լիակատար երգարանի մէջ
հրատարակելու համար, մինչև նոյեմբերի
15-ը ներկայ թւի, հետեւեալ հասցէով.
Святи. Григорію Григоріанцѣ, Баку.
(№ 116) 3—5